№ 50 ՇԱԲԱԹ, 7 ՄԱՐՏԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 7 ՄԱՐՏԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարվում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Կիրակի, մարտի 8-ին, կատարելու է
ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼԵԱՆԻ
մահվան 10-ամեայ տարելիցի առիթով ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ։

Պատարագը սկսվելու է ժամը 11-ին Խօջիվանքի եկեղեցում. երգելու է Ներսիսեան դպրոցի երգեցիկ խումբը երգիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ մասնակցութեամբ։ Հոգեհանգիստը ժամը 12½-ին, գերեզմանի վրա։

131. 1—1

Վարվառէ Արտէմեան ՍԻՄՕՆԵԱՆՑ՝ իր զաւակներով, յայտնում են ազգականներին ու ծանօթներին՝ առաջինն իր թանգագին ամուսնու, իսկ երկրորդներն իրանց հօր՝
ԱՐՇԱԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՍԻՄՕՆԵԱՆՑԻ
մահը, որ տեղի ունեցաւ փետրվարի 25-ին, երեկոյեան ժամը 10-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը՝ այսօր, մարտի 7-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Բեթղեհէմի վերեւը, № 4) դէպի Քամոյեան ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

133. 1—1

Կատարինէ, Գրիգոր, Տիգրան և Նինա ՄԱՆՈՒԿԵԱՆՆԵՐԸ յայտնում են իրանց բարեկամներին և ծանօթներին իրանց սիրելի փեսայ
ԱՐՇԱԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՍԻՄՕՆԵԱՆՑԻ
մահը։ Յուղարկաւորութիւնը, այսօր ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Բեթղեհէմի վերեւը, № 4) դէպի Քամոյեան ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

125. 1—1

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը յայտնում է, որ այսօր, շաբաթ, մարտի 7-ին, առաւօտեան ժամը 12-ին Մուղնու ս. Գէորգ եկեղեցում կատարվելու է հանգուցեալ բարերար
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՒԴԱԴԵԱՆԻ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ։

129. 1—1

ՄԱՀՎԱՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ
Առաքել Սողոմոնեան ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆՑԻ

Վաղը, կիրակի, մարտի 8-ին, Տափի Թաղի ս. Գէորգ եկեղեցում (Դվորցովայա փողոց) կը մատուցվի պատարագ և ապա Վէրայի գերեզմանատանը կը կատարվի հոգեհանգիստ և արձանի օրհնութիւնը, որի մասին յայտնում է բարեկամներին և ծանօթներին հանգուցեալի այրին՝ Նադեժդա Սարգսեան Վարդապետեանը։ Պատարագի սկիզբն է ժամը 11-ին առաւօտեան։

128. 1—1

Կիրակի, մարտի 8-ին
ԹԻՖԼԻՍԻ ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
(Մուտքը Թատրոնական պօդիէզդից)
ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՇԱՏԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
Յօգուտ գաղթականների
Վարշավայի համալսարանի պրօֆեսոր Ն. Ս. ԱՂԱՋԱՆԵԱՆ կը կարդայ դասախօսութիւն հետևեալ թեմայով.
„О навязчивыхъ и бредовыхъ идеяхъ и массовыхъ психозахъ“.
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։

Տոմսակները վաղօրօք կարելի է ձեռք բերել՝ 1) Սուլթանաջեանի խանութում (Երևանեան հրապարակի վրա), 2) Լոտտի կօնդիտէրի խանութում (Դվորցովայա փող), 3) «Պրօգրէսս» ծխախոտի խանութում (Ժողովարանի տակ), 4) «Մշակի» խմբագրատանը (Սոլոմոնովսկայա փող. № 21), իսկ դասախօսութեան օրը՝ Արտիստական Ընկերութեան մէջ։
Տոմսակների գներն են 2 րուբլուց մինչև 50 կոպէկ։ Կանգնած՝ 30 կոպ.։
առ. (ու. կ.) 122. 3—3

ԽԱԹԱԲԱԼԻՍՏՆԵՐ բոլոր երկիրների միացէք և ուշադրութեամբ այսօր
№ 11 „ԽԱԹԱԲԱԼԱ“ № 11
հայ եւ ռուս տեքստով կարդացէք։
Սպառված համարները զուարճական նոր բաժանորդագրվողների համար ուղարկվում են «Խաթաբալայի» երկրորդ հրատարակութիւններից։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція «ХАТАБАЛА».
առ. 135. 1—1

ԲԺԻՇԿ
Տուշանիկ Նաքարեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)։
Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12½—2.
(եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլօլակ, Բուլլիչեվսկայա փ. № 1
Հեռախօս 10—58.
(Ն.Հ.Կ.) առ. 784. 100—74

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարանի պրօֆ. Պօզնէրի։
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններով, առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6։ Սօլօլակ՝ Բուլլիչեվսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տելեֆոն 10—58.
(Հ. ու. կ.) առ. 875. 70—67

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Երեքշաբթի, մարտի 10-ին
ԿԸ ԿԱՅԱՆԱՅ
ՀԱՄԵՐԳ
Բարեհաճ մասնակցութեամբ՝
տ. տ. Ե. Դ. ԱՖՐԻԿԵԱՆԻ, Ե. Դ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆԻ
յայտնի դաշնակահարուհի ՄԱՐԳԱՐԻՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
ջութակահարուհի օր. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ, ***-ի, պ. պ. ՏԻԳՐԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ, ՄՈՒՇԵՂ ԱՂԱՅԵԱՆԻ և Ներսիսեան դպ.-ի խառն խմբի՝ ղեկավարութեամբ պ. ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔԵԱՆԻ

Զուտ արդիւնքի 50%-ը
Յօգուտ փախստականների

Տոմսակները նախօրօք վաճառվում են Սուլթանաջեանի երաժշտական խանութում։ Սկիզբն է երեկոյեան ժամը 8½-ին։ Ընկերութեան անդամների մուտքը ձրի է։
(ա. օ.) առ. 132. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Այսօր, շաբաթ, մարտի 7-ին
ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹ.
Կը ներկայացնէ
ԹԱԳԱՒՈՐ
Պիէս 3 գործ., հեղ. Ս. Իւշկեվիչի
Մասնակցում են՝ Ցամիկ, Զաբէլ, Կարախանեան, Մայսուրեան, Սեւումեան, Ագեան, Գրիգ-Դաւիթ-Խան, Մանուէլեան, Միրզոյեան և ուրիշները։
Սկիզբը երեկ. ժամը 7½-ին։
Տոմսակները՝ 1 րուբլուց—30 կ.։
Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ վճարում են ժողովարանի մուտքի համար—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները 25-ական կոպ.։ 126 1—1

ՎՆԱՍՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բուլլիչեվսկայա 13, տելեֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Ցարութինեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Բ. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(Ն.կ.) առ 970. 100—35

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ
պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 10—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը Նրբափողոցից։
առ. (Հ.կ.) 804. 0—91

ՊԷՏՔ Է ԱՐԱԳ ՄԻՋՈՑՆԵՐ ՁԵՌՔ ԱՌՆԵԼ

«Մշակի» երէկվայ համարում տպված թղթակցութիւնը Սուխումից պէտք է մեր ամենքի լուրջ ուշադրութիւնը գրաւէ և անհրաժեշտ է շուտափոյթ միջոցներ ձեռք առնել վերահաս աղէտի առաջն առնելու։

Օրէնքի տրամադրութիւնների համաձայն՝ թշնամի պետութիւնների հպատակները, որոնք ապրում են Ռուսաստանում, պարտաւոր են մինչև առաջիկայ ապրիլի 1-ը լիկվիդացիայի ենթարկել իրանց բոլոր գործերը և մեկնել Ռուսաստանից։

Որովհետև թշնամի պետութիւնների շարքին է պատկանում և Թիւրքիան, որովհետև Կովկասում, Անդրկովկասում և Սև-ծովի ափերին գտնվում են տասնեակ հազարաւոր թիւրքահայեր, որոնք 30 տարիներից ի վեր հաստատվել են, ձեռք են բերել իրանց համար որոշ տնտեսութիւն, ստեղծել են որոշ բարեկեցիկ կեանք, նպաստելով միևնոյն ժամանակ երկրի կուլտուրական զարգացման, ուստի վերոյիշեալ օրէնքը ապրիլի 1-ին պէտք է գործադրվի և նրանց նկատմամբ։ Բայց այդ գործադրութիւնը նշանակում է կործանել 60,000 թիւրքահայերի տնտեսութիւնը, բարգաւաճ կեանքը և ենթարկել նրանց թշուառութեան, քայքայման։

Իր ժամանակին «Մշակը» հրաւիրեց ուշադրութիւն դարձնել այդ կարևոր հանգամանքի վրա և միջոցներ ձեռք առնել, որ թիւրքահայերի վերաբերմամբ, մանաւանդ ծովափնեայ հայութեան վերաբերեալ, այդ օրէնքը չը գործադրվի։

Ցաւում ենք, որ այն մարմինները, որոնք կարող էին և ձեռնհասութիւն ունէին զբաղվել այդ հարցով, հարկաւոր միջոցները ձեռք չեն առել, որպէսզի այսօր նորից հրապարակի վրա չը դրվի այդ հարցը։ Բայց նա անյետաձգելի է. պէտք է արագ և անմիջապէս միջոցներ ձեռք առնել, որ ապրիլի 1-ին 60,000-անոց հայութիւնը դէմ առ դէմ կանգնած չը լինի աքսորման։ Եւ ու՞ր կարող է արտաքսվել կամ գնալ։ Թիւրքիա վերադառնալ չէ կարող, ուրիշ ոչ մի այլ պետութիւն ևս չի ընդունի 60,000 քայքայված, տնանկացած ամբոխ։ Ուրեմն այդ ահագին զանգուածը պէտք է կորստեան մատնվի։

Հրաւիրում ենք Հայկ. Կենտրոնական Բիւրոյի կամ այն առաջնորդների ուշադրութիւնը, որոնց իրաւասութեանն են ենթարկված ծովափնեայ թիւրքահայերը, որպէսզի նրանք շտապեն դիմել Ամենայն Հայոց Կաթողիկոսին միջնորդելու կառավարութեան առաջ՝ չը գործադրելու թիւրքահայերի վերաբերմամբ օրէնքի տրամադրութիւնը։

Հ. Ա.

ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆՔ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐԴԻՒՆՔԸ

Էջմիածնում գումարված համաժողովի արդիւնքը Պարսկաստանից, Թիւրքիայից և կովկասեան սահմանագլխային վայրերից փախստական գաղթականների վիճակի, կարիքների և ապագայի մասին պէտք է ողջունվի համակրութեամբ Ռուսաստանի ամբողջ հայութեան կողմից։

Փախստական-գաղթականների այն հոսանքը, որ սկսվեց Թիւրքիայի հետ ունեցած պատերազմի հետևանքով, մի հոսանք, որի նմանը գուցէ դեռ հայկական պատմութիւնը չէ տեսել. մի հոսանք, որ սպառնում է դատարկել հայութիւնից լայնածաւալ հայկական շրջաններ, բնականաբար, գրաւեց հայ հասարակութեան լուրջ և մտահոգ ուշադրութիւնը, այնպէս որ փախստական-գաղթականների հարցը դարձաւ կապիտալ, կարևորագոյն հարց։ Բնական էր նոյնպէս, որ հայկական բոլոր հիմնարկութիւնները, որոնց ծրագրի մէջ մտնում են բարեգործական և մարդասիրական ֆունկցիաներ, իրանց նուիրական պարտքը համարեցին զբաղվել փախստականներին օգնելու գործով, ինչպէս և ստեղծվէին յատուկ մարմիններ՝ նոյն օգնութեան նպատակով։

Սակայն շուտով նկատվեց մի մեծ դեֆեկտ, թերութիւն օգնութեան ընդհանուր գործի մէջ. բացակայում էր ամենից առաջ ընդհանուր ղեկավարութիւն, գործունէութեան ընդհանուր, միաբան և համերաշխ սիստեմ, դրամական և նիւթեղէն նպաստների բաշխման միութիւն, և այդ բոլոր դեֆեկտներից տուժում էին, անշուշտ, փախստականները։ Բազմաթիւ հաստատութիւններ, ընկերութիւններ, յանձնաժողովներ, կոմիտէներ զանազան քաղաքներում ստանում էին նուէրներ և ծախսում անկախ և ազատ իրարից, առանց որևէ համաձայնութեան և գործակցութեան։

Այդ գործելակերպի ամբողջ թերութիւնը և վնասակարութիւնը շուտով նկատվեց, ուստի և մամուլն ու հասարակական կարծիքը չը յապաղեցին պահանջել, որ ստեղծվի գործունէութեան ընդհանուր, համերաշխ սիստեմ, աշխատանքի բաժանում։ Այդ պահանջն աւելի ևս հրամայողական դարձաւ, երբ հրապարակի վրա դրվեց և փախստական-գաղթականներին հայրենիք վերադարձնելու և նրանց քայքայված տնտեսութիւնը վերականգնելու հարցը։

Եւ, մեր կարծիքով, այդ էր պատճառը, որ երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրէնութեամբ և ղեկավարութեամբ կազմվեց Էջմիածնում «Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողով», հայ հասարակութեան և նուիրատուների հայեացքը անմիջապէս ուղղվեց դէպի այդ Յանձնաժողովը և նկատեց նրա մէջ պահանջեալ ղեկավարող մարմինը, ու նուէրների հոսանքն ուղղվեց դէպի այդ Յանձնաժողովը, որ լինելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի անմիջական ղեկավարութեան ներքոյ՝ նկատվեց իբրև ամենից հեղինակաւորը և ձեռնհասը գոյութիւն ունեցող բոլոր կազմակերպութիւնների մէջ, մանաւանդ որ նա գտնվում էր փախստականների բնակութեան կենտրոնավայրում, հետևաբար և օգնութիւնն աւելի արագ կարող էր լինել։

Սակայն անհրաժեշտ էր և ժողովրդական ներկայացուցիչների ու միացած բոլոր կազմակերպութիւնների համագործակցութիւնը։ Մի միտք, որ ամենից առաջ արծարծեց «Մշակը» և որի իրագործման նախաձեռնութիւնը ստանձնեց Հայ Նպաստամատոյց Ընկերութիւնը։

Եւ ահա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, դնելով խնդիրը գործնական հողի վրա, նշանակեց Էջմիածնում համաժողով խորհրդակցելու արծարծված հարցերի մասին և փախստականների օգնութեան գործի կազմակերպութիւնը դնելու ռացիոնալ հիմունքների վրա։

Համաժողովը կայացաւ մարտի 1—3-ին, քննեց լրջօրէն և մանրամասնօրէն բոլոր կարևոր հարցերը վերաբերեալ փախստականների վիճակին և կարիքներին ու վերադարձին, մշակեց, վերջնականապէս խմբագրեց օգնութեան ծրագիրը, որոշեց հաստատել Էջմիածնում, Ամենայն Հայոց Կաթողիկոսի անմիջական ղեկավարութեան ներքոյ, Գլխաւոր Կարգադրիչ կամ Կենտրոնական Յանձնաժողով, բաղկացած 4 հոգևորական և 8 աշխարհական ընտրեալ ներկայացուցիչներից, և կենտրոնացնել օգնութեան գործի ընդհանուր ղեկավարութիւնը այդ Յանձնաժողովի ձեռքում, քուէարկելով մի նախահաշիւ մօտ 5.000,000 ր.։

Այդ նախահաշուի մանրամասնութիւնը կը տպվի «Մշակի» մէջ։

Գոյութիւն ունեցող բոլոր միւս կազմակերպութիւնները, կոմիտէները պէտք է համակերպվեն Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովի հրահանգներին և գործեն իբրև տեղական մարմիններ։ Նրանք նոյնպէս կարող են ժողովարարութիւն անել, կոչեր անել, բայց միայն իրանց շրջաններում, իսկ հանգանակութեան համար համազգային կոչեր անելու իրաւունքը վերապահված է Էջմիածնի Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովին։

Ողջունելով համաժողովի արդիւնքը և ցանկանալով Նորընտիր Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովին բեղմնաւոր գործունէութիւն յօգուտ դժբաղդ փախստականների, չենք կարող ցաւ չը յայտնել, որ մեր հայկական հիմնարկութիւններից երկուսը, այն է Կ. Հ. Բ. Ընկերութիւնը իրան կից Հայկական Կենտրոնական Կօմիտէով և Հայ Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկերութիւնը վերջում զլացան ըստ ամենայնի պահպանել համերաշխութեան և միաբանութեան գործը, յայտարարելով, որ նուէրների ժողովարարութեան և գործադրութեան խնդրում նրանք իրանց ազատ են համարում, այսինքն ըստ առաջնոյն շարունակելու են նուէրներ ստանալ և գործադրել՝ անկախ Էջմիածնի Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովից, որ ընտրված է ամենքի կողմից։

Սակայն համոզված ենք, որ ինքն

հայ Նուիրատու հասարակութիւնը կը չէզոքացնէ այդ անջատողական ձըգտումը և այսուհետև կը ճանաչէ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ գործող Էջմիածնի Գըլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովը՝ իբրև ընտրեալ հայկական հաստատութիւնների համաժողովով միակ կենտրոնական մարմինը՝ գաղթականների օգնութեան գործին վերաբերեալ բոլոր հարցերի մէջ։

Հ. Առաքելեան

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱԳՈՂՈՎԸ

Էջմիածին, 4 մարտի

«Մշակի» № 46-ում տպված հեռագրի մէջ Էջմիածնից, մարտի 1-ին, մտել են սխալներ. Պէտք է կարդալ այսպէս՝ «Կօնդակով համաժողովի նախագահ է նշանակված Յուսիկ արքեպիսկոպոսը. Պատարագից յետոյ Վեհափառ Կաթողիկոսը ընդունեց համագումարի անդամներին...»։

Էջմիածին, 4 մարտի

Համագումարը, հաստատելով Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի անմիջական ղեկավարութեան ներքոյ Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողով, բաղկացած 4 հոգևորական և 8 աշխարհական ներկայացուցիչներից (Երևանից՝ 4 ներկայացուցիչ, Թիֆլիսից՝ 2, Բագուից՝ 1 և Մոսկվայից 1), որին պէտք է ուղղվեն այսուհետև բոլոր նուէրները, մշակեց հետևեալ նախահաշիւը ի հրահանգութիւն. 1) 60,000 գաղթականների պահպանութեան ծախք, 6 ամիս, հաշուելով օրական 15-ական կոպէկ 1 620,000 րուբլի, 2) բժշկական օգնութիւն, հիւանդանոցներ, դեղօրայք և այլն 123,000 ր., 3) փոխադրութեան ծախք, շինութիւնների վերականգնումն, սերմացու, լծկան, կթան անասուն, սայլ, գիւղատնտեսական գործիքներ և այլն՝ 2.762,230 ր., 4) կեանքի և գոյքի ապահովութիւն՝ 150,000 ր.։ Գումարը 4,555,230 րուբլի։

Համագումարի 28 ներկայացուցիչներից միայն 4 ը (Ս. Յարութիւնեան, Ա. Ղազարեան, Ա. Թադէոսեան և Շարաֆեան, որոնք ներկայացնում են Կ. Հ. Բարեգործական Ընկերութիւնը իբրև կից Հայկական Կենտրոն. Կոմիտէտով և Հայ Գիւղատնտ. և Տնայնագ. Ընկերութիւնը), երբ ձայների ճնշող մեծամասնութեամբ ընդունվեց, որ Գլխաւոր Կարգադրիչ կամ Կենտրոնական Յանձնաժողովը լինի Էջմիածնում, բաղկացած վերոյիշեալ 12 անդամներից, յայտարարեցին, թէ իրանց ազատ են համարում նուէրների ժողովարարութեան և գործադրութեան խնդիրներում։ Այս յայտարարութիւնը թէ համաժողովի անդամների և թէ Կաթողիկոսի վրա թէև թողել է ծանր տպաւորութիւն, բայց նա ոչ մի կերպով չէ կարող փոխել կայացած որոշումը, որ հայ ժողովրդի ընդհանուր ցանկութիւնն է արտայայտում։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 մարտի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Մարտի 3-ին և 4-ին կովկասեան զօրաճակատում խոշոր ռազմական ընդհարումներ չեղան։

ԶՄԻՒՌՆԻԱՅԻ ԱՆԿՄԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 մարտի

ԱԹԷՆՔ. — Միտիլէնից հաղորդում են, որ «Ասկօլդ» յածանաւը, ռմբակոծելով աջողութեամբ Վուրլայի ամրութիւնները, Զմիւռնիայից վերադառնալուց յետոյ, երէկ առաջին անգամ մտաւ նեղուցը ռազմանաւերի պաշտպանութեան տակ, որոնք շարունակում են աջողութեամբ ականներ որսալ։

Պատերազմական գործողութիւնները Զմիւռնիայի մօտ ներկայումս ընդհատված են։

Ռմբակոծութեան ժամանակ Զմիւռնիայի բնակիչները ենթարկվեցին լուրջ վտանգի՝ Թիւրքերի սպառնալիքների պատճառով։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Պետրօգրադի եապօնական միսիան տեղեկութիւն է ստացել, որ ֆօն-դէր Գոլց փաշան մեռել է։

◆ Դարդանէլլում ականներ որսալու ժամանակ ջրասոյզ են եղել դաշնակիցների երկու ականորս նաւեր։ Ասում են, որ դաշնակիցները Կ. Պոլիս կը մտնեն ապրիլի կէսերին։

◆ Հաղորդում են, որ սուլթանը հրաժարվում է Կոնիա գնալ, գերադասելով գերի ընկնել ֆրանսիացիների ձեռքը, քան թէ երիտասարդ-թիւրքերի։

◆ Յայտնում են, որ Յունաստանը բողոքել է դաշնակիցներին՝ կղզիները գրաւելու դէմ։ Ի պատասխան բողոքին մատնացոյց է արված, որ Յունաստանը իր գոյութեամբ պարտական է դաշնակիցներին։

◆ Զմիւռնիայի ռմբակոծութիւնը շարունակվում է։

◆ Զատկից յետոյ բուլգարները մտադիր են գրաւել Թրակիան և Ադրիանուպոլիսը։

◆ Թերթերը հաղորդում են, որ Աբդիւլ-Համիդի որդի Բուրհան-Էդդինը սպանվել է։

ԶՄԻՒՌՆԻԱ

I

Զմիւռնիա կամ Իզմիր քաղաքը գտնվում է Ասիական Թիւրքիայի արևմտեան ծայրում Եգէյեան ծովի ափից ոչ հեռու. գլխաւոր քաղաքն է Այդընի վիլայէթի։ Զմիւռնիան որպէս ծովային քաղաք շատ նշանաւոր առևտրական կենտրոն է Փոքր-Ասիայի և Եւրոպայի միջև։ Քաղաքը բաժանվում է երկու գլխաւոր մասի՝ վերին կամ ֆրանկների քաղաք և ներքին կամ Թիւրքական քաղաք։

Մաքուր և գեղեցիկ մասը բնականօրէն վերին, եւրոպական մասն է, ուր կանգնած են գեղեցիկ շէնքեր։ Աւելի գեղեցիկ ու հոյակապ են ծովեզրեայ մասերը, ուր գտնվում են քաղաքի հոյակապ շէնքերը, կաֆէները և հիւրանոցները։ Զմիւռնիայում նստում են Այդընի նահանգի վալին, յոյնաց, հայոց և կաթոլիկների առաջնորդները. այդտեղ են գտնվում և Թիւրքաց ու Ֆրանսիական առևտր. պալատները։ Քաղաքի շէնքերի մէջ աչքի են ընկնում Թիւրքական մզկիթները (40-ից աւելի)։ Կան նաև բազմաթիւ եկեղեցիներ, որոնցից 13-ը պրաւօսլաւ, 5-ը կաթոլիկաց, 3-ը բողոքականների և 3-ը հայոց։ Հրէաները էլ ունեն 5 սինագոգ։ Դպրոցական հաստատութիւններից յայտնի են յոյնաց, հայոց, գերմանացոց, անգլիական վարժարանները։ Առանձնապէս պատուաւոր տեղ է գրաւում յոյնաց ուսումնական ընկերութեան դպրոցը իր գրադարանով և թանգարանով։ Քաղաքի հասարակական շէնքերի թւին են պատկանում հիւանդանոցները, անկելանոցները, օրբանոցները և այլն։

Զմիւռնիայի արդիւնաբերութիւնը մինչև վերջերս պարփակվում էր մետաքսի, բրդի, բամբակի գործուածքների գործարաններով, կաւեղէն ամանների արհեստանոցներով և գորգագործութեամբ, բայց յետագայում մի քանի եւրոպական ֆիրմաներ հիմնեցին այնտեղ մեքենաներ պատրաստելու, չուգունահանքի մեծ գործարաններ, ինչպէս և շոգեշարժ աղօրեարաններ և ջրաղացներ։ Քաղաքից ապրանք արտահանվում է գլխաւորապէս Հիւսիս. Ամերիկա, Անգլիա և Ֆրանսիա։ Արտահանութեան մէջ նշանաւոր տեղ են բռնում նաև գինին, խաղողը, թուզը, գարին, լոբին, օպիումը, բամբակը, ծխախոտը, զանազան մթերքներ և այլն։ Երկաթուղով և կարաւաններով մշտապէս քաղաք են ներմուծվում հացեղէն և գործուածքներ, տախտակ, սուրճ, կաշի, երկաթ, իւղ, քարածուխ, բրինձ, նաւթ և ապակեղէն։ Զմիւռնիայի հետ ծովային մշտական հաղորդակցութեան մէջ են Մեսսաժըրի Մարիտիմ, Աւստրիական Լլօյդ, Նավիգասիօն ժէնէրալ, ինչպէս և ռուսական, յոյնական և թիւրքական նաւային ընկերութիւնների նաւերը։

Ազգաբնակութեան տեսակէտից Զմիւռնիան պատկերացնում է մի միջազգային քաղաք՝ ազգերի և ժողովուրդների իր բազմազանութեամբ։ Քաղաքի բնակչութեան թիւը 300,000-ից աւելի է, որի համարեա կէսը յոյներ են։ Մնացած կէսի մէջ են մտնում մահմեդականները՝ մօտ 60,000, հրէաները մօտ 30,000, հայերը՝ մօտ 15,000, իտալացիները՝ մօտ 8000, ֆրանսիացիները՝ մօտ 3000, և քիչ աւելի պակաս աւստրիացիներ, անգլիացիներ և այլն։

II

Ի՞նչ անցեալ ունի Զմիւռնիան։ Այս քաղաքը հիմնված է 10-րդ դարում նախ քան Քրիստոս և եղել է Հին Յունաստանի առևտրական ծովափնեայ քաղաքներից մէկը։ 7-րդ դարում (Քրիստ. առաջ) Զմիւռնիան կործանեց Լիդիայի թագաւոր Ալիատտը և մօտ 300 տարի այդ քաղաքը իրանից ներկայացնում էր աւերակների մի մեծ կոյտ։ Դեռ մինչև այսօր էլ երևում են Զմիւռնիայի այդ նախնական շրջանի մնացորդները։ Ալէքսանդր Մակեդոնացու մահից յետոյ Անտիգօնը շինութեան հիմքը դրեց նոր քաղաքի, հին-Զմիւռնիայից երեք վերստաչափ հեռաւորութեան վրա։ Կարճ ժամանակում նոր քաղաքն սկսեց բարգաւաճել ու ծաղկել շնորհիւ իր ծովային առևտրական յարմարաւոր դիրքի։ Քրիստոնէութեան 3-րդ դարում մեծ երկրաշարժը կործանեց նոր Զմիւռնիան, ապա Մարկոս Աւրելիոս նորից վերաշինեց, որը և կարճ ժամանակում հասաւ բարգաւաճ դրութեան։ Քրիստոնէութիւնը Զմիւռնիայում ամուր պատուանդան գտաւ, այնտեղ և նահատակվեց Պօլիկարպ եպիսկոպոսը։

11-րդ դարի վերջերում (1092) Զմիւռնիան գրաւեց ծովային աւազակ Ցախասը, բայց բիւզանդացիք ետ գրաւեցին 1097 թւին։ 1344 թւին այդ քաղաքը երկար ժամանակով ընկնում է ռօդօսցիների ձեռքը և կառավարվում է պապի կողմից ուղարկված փոխարքայի իշխանութեամբ։ 1204 թւի դեկտեմբերին 14 օրվայ պաշարումից յետոյ Զմիւռնիան գրաւում է Լենկթիմուրը և կործանում։ Բայց այս անգամ էլ այդ զարմանալի քաղաքը նորից կեանք առաւ աւերակների միջից, և չը նայելով դարձեալ պատահած երկրաշարժումներին և հրդեհներին՝ Զմիւռնիան մինչև վերջերս էլ առաջադիմում է։

III

Թիւրքահայ մտաւոր կուլտուրական կեանքի մէջ Զմիւռնիան ունի իր պատուաւոր բաժինը։ Այնտեղ անցեալ դարում մենք ունեցել ենք մի շարք անուանի գործիչներ գրական, հրապարակախօսական և հասարակական ու դպրոցական ասպարէզներում։ Այնտեղ է հրատարակվել երկար տարիներ Գ. Պալթազարեանի «Արշալոյս Արարատեանը», Մ. Մամուրեանի «Արևելեան Մամուլը» և վերջիններս օրրը «Դաշինքը»։ Այնտեղ են լոյս տեսել 60-ական, 70-ական թւականներին Գ. Չիլինկիրեանի, Գ. Մսերեանի ֆրանսերէնից թարգմանած բազմահատոր վէպերը, Էժէն Սիւի, Հիւգոյի և այլոց գրուածքներից։ Զմիւռնիայում է գտնվում Մեսրոպեան վարժարանը, այնտեղ է պաշտօնավարել իր կեանքի վերջերում մեր անուանի եկեղեցականներից Գարեգին եպիսկ. Մուրադեանը։ Զմիւռնիայում յայտնի է եղել Տէտեան եղբայրների տպարանը, ինչպէս և Սպարթալեան բարեգործ ընտանիքը։

Ք.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 մարտի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Շկվա և Օրժից գետերի միջև գտնվող զօրաճակատում Սէրաֆին, Տարտակ, Վախ, Ջիօժէկ գիւղերի շրջաններում, նաև Պրասնիշից դէպի հիւսիս ընկած մասում շարունակվում են կռիւները, որոնք կրում են մասնակի բնոյթ։ Մենք տիրացանք մի քանի գիւղերի ու բարձրաւանդակների, վերցրինք 5 թնդանօթ ու 42 գնդակացիր, ռազմամթերք ու մի քանի հարիւր գերի։

Նէմանի աջ ափում, Տաուրօգէնի մօտ և գերմանական հողի վրա՝ Գօրջա-Մեմէլ ճանապարհի վրա կռիւ է։ Այստեղ մենք ձեռք ձգեցինք 2 թնդանօթ, 4 գնդակացիր ու երկու ապրանքատար աւտօմօբիլ ռազմամթերքով, նաև վերցրինք գերիներ։

Վիսլայի ձախ ափում ուժեղ թնդանօթաձգութիւն է։

Բզուրի մօտ և Պիլիցիայի շրջանում, ոչ հեռու Բօգուսլավից, որ գտնվում է Օպօչնօյից դէպի արևմուտք ու Լօպուշնօյի մօտ, յարձակման դիմած թշնամու գնդերը ցիրուցան եղան մեր կրակից։

Կարպատներում և Արևելեան Գալիցիայում փոփոխութիւն չը կայ։ Օբարովչիկի մօտ մենք ոչնչացրինք մեզ վրա յարձակված գերմանական երեք վաշտ, ըստ որում սուինային յարձակումից զերծ մնացած գերմանացիք, թւով 3 օֆիցէր և 93 զինուոր, գերի ընկան։

Պերեմիշլի մօտ բերդի թնդանօթները ամեն օր կրակում են աւելի քան 1000 ռումբ։ Պերէմիշլը պաշարած մեր զօրքերի կորուստը կազմում են օրական միջին թւով 10 մարդ։

Պիլիցայի ձախ ափում գերմանացիք շարունակում են ուժեղ թնդանօթաձգութիւն։ Նրանց կորուստներն այդ շրջանում փետրվարի 20-ից՝ կազմում են 25,000 մարդ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 մարտի

ՊԱՐԻԶ.—Երէկ երեկոյեան հաղորդագրութիւնը յայտնում է, որ Արրասի հիւսիսային կողմում, չը նայած թշնամու երրորդ հակայարձակման, մենք մնացինք մեր դիրքերում։ Ալբօրի շրջանում տեղի էին ունենում տաք կռիւներ մարտի 2-ին պայթած ականից առաջացած փոսին տիրանալու պատճառով։ Մենք գրաւեցինք նրա ծայրերը։ Շամպայնում մենք ունեցանք փայլուն աջողութիւն։ Պէրտի շրջանում մենք, չը նայած գերմանացիների խիստ դիմադրութեան, շարունակում ենք առաջանալ։ Մենք ձեռք ձգեցինք 800 մետր երկարութեան խրամաշղթայ, նաև 400 մետր տարածութեամբ հրապարակ։ Թշնամին խիզախ հակայարձակման ձեռնակեց այդ կարևոր տեղերը ետ խլելու նպատակով, բայց սոսկալի պարտութիւն կրեց մեր գնդակացիրների կրակից։ Արգօնեան բարձրաւանդակում տեղի էր ունենում ուժեղ թնդանօթաձգութիւն։ Լեպրէտի անտառում գերմանացիք բոլորովին վանվեցին մեր խրամատների մօտից։

ԼՕՆԴՕՆ. — Մեծ-Բրիտանական գլխաւոր բանակում եղած մի ականատես վկայում է, որ Նէվշապելի մօտի վերջին կռիւներում թշնամին կորցրեց 18,000 մարդ՝ չը հաշուած գերիներին։ Գերված մի օֆիցէր պատմում է, որ այդ զօրաճակատում գտնվում էին երեք պրինցներ, ի թիւս որոց Լէօպօլդ Հօհէնցօլէրնը։ Օֆիցէրը կարծում է, որ բոլոր երեքն էլ սպանվել են։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Գիշերվայ մթութեան մէջ կանգնած գերեզմանոցում մենակ,
Հրամայում եմ անդրերկրային բնակիչների՛դ համօրէն.
Բացէք ձեր մամռոտ հողաթմբերը՝ կանգուն թէ աւերակ,
Ե՛տ արէք ծխացող դամբանների ծանր քարերը խուցկէն
Ու դուրս եկէք ձեր կմախքների սոսկատեսի՛լ վահմակով,
Դուրս եկէք ձեր դժոխային տանջանքների՛ արհաւիրքով,
Դուրս եկէք ձեր մութ աչքերի անասելի՛ սարսափով,
Դէհ, դուրս եկէք ձեր փտած գանգերի ահաւո՛ր դատարկով։
Տուէք ինձ մահացողի վերջին հոգոցը տագնապալի,
Ջրահեղձների՛ դուրս թռած աչքերի պըլշումը զարհուրելի.
Գերեզմանում զարթնողի ինքնարզկտումներն անպատմելի
Ու քաղցից իր իսկ միսը կրծողի մռնչումը փրփրալի։
Օգնութեան հասէք ինձ, վհուկներ, ուրուականներ անմարմին,
Որ քարանձաւներում հաւաքվում էք գիշերաժամին,
Զարութի՛ն էք նիւթում, կախարդաց խարոյկներ սարքում,
Մեռելների՛ լեարդներից մահաբեր թոյներ էք եփում։
Դո՛ւք էլ եկէք կանաչաչուի մողէսներ ու թռչուններ,
Ճանկաթև չղջիկներ, վհուկների դուք անբաժան ընկերներ,
Եկէք, բերէք ձեր սոսկատարածու արհաւի՛րքն անլեզու.
Դժոխք երկրի կենդանի յօշոտվողներն եմ ողբերգելու։

⁂

Ահա, շարժվում են գերեզմանի հողաթմբերը մամռոտ
Ու դուրս են սողում կմախքների շարքերը հանգստակարօտ։
Շղթայված են աշխարհ եկել, շղթայված ապրել, շղթայով թաղված.
Եւ, ահա, կրկին դուրս են սողում փոսերից՝ շղթայի՛ զարնված։
Ու նրանց սև շղթաները կռծում են լռութեան մէջ ցաւագին,
Կրծում, մաշում են նրանց ճերմակ ոսկորները հանդարտագին։
Ահա, կմախքների շարքերը խելագար շարժումներով
Իրանց կրծքավանդակներն են ծեծում կմախքացած ձեռներով,
Վայում են անձայն, աղեկտուր հեծեծում խոնարհ ու հեզ,
Ահա, գեհենային խոլ խմբերով գալիս են դէպի մեզ։
Վհուկներ, ուրուականներն ու չար ոգիները բովանդակ
Խաւարում ուրուագծվում են արդէն ձևերով այլանդակ,
Ահա, մութ երկնքով սաւառնում է չղջիկը մանգաղաթև՝
Խաւար, աւեր ու մահ սփռելու անյագ տենչով յարատև։

Եղ—Ունի

ԷԼ ՉԸ ԿԱՅ ԽՆԴՈՒԹԻՒՆ...

(Լ. Մունշտէյնից)

Էլ չը կայ խնդութիւն խաւարի աշխարհում.
Դադարեց վառ ծիծաղ, երգերը լռեցին.
Օրերը կամացուկ սահում են և հանգչում
Հեղձուցիչ խաւարում...
Եւ կեանքը մռայլվեց, ու նրա ճակատին՝ տխրութեան գորշ ամպեր...
Խորտակված խոր քնով զարթնում ես վշտահար,
Դու պատրաստ ամենուն, հնազանդ, տանջալից...
Առնում ես լրաբեր ձեռքերով գալկահար.
Կոշմարը վերջ չունի...
Արիւնը գետերով հոսում է դաշտերից,
Աճում են և անվերջ սև ազգեր զոհերի...

Ոչ արև և ոչ ցուրտ էլ մեզ չեն գրաւում.
Ոչ դաշտեր ձիւնափայլ, ոչ հնչուն եռանձին.
Էլ չը կան մանկութեան երազներ սիրասուն,
Խաւարեց ջահել կեանք, ամեն ինչ թեւաբեկ...
Կլանվեց Արէսի սոսկալի խնձոյքին։
Էլ չը կայ խնդութիւն... շրթունքներ սիրավառ,
«Սիրոյ երգ» շշնջող, փակվեցին ցաւերով.
Ամեն ինչ թանկագին՝ սալ-քարով շիրիմի...
Եւ երգեր ռամկական զուգորդված միալար
Հնչեցին կարեվէր, յուսահատ հառաչով...
Գնում են դէպի մահ ծաղիկներ հայրենի,
Գնում են փշրելու արնաներկ կուռքի ուժ։
Տեսնում եմ ես մտքով նպատակ մեծ կռուի.
Բայց հոգիս կարօտ է լռութեան և սիրոյ,
Օ՜հ, հիւանդ իմ հոգին հաշտութեան ծարաւի։

Գ. Հայկունի

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Էջմիածին, 28 փետրվարի

Այսօր առաւօտեան ժամը 6-ին հասայ Էջմիածին՝ մասնակցելու այն համագումարին, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովը գումարել է պատերազմից մնացած հայ փախստական-գաղթականների մասին խորհրդակցելու, թէ ինչ կերպով կազմակերպել օգնութեան գործը, ինչ միջոցներ ձեռք առնել՝ նրանց նորից հայրենիք վերադարձնելու, նրանց քայքայված անտեսութեան վերականգնման նպաստելու։

Ուղևորութիւնս Թիֆլիսից Էջմիածին շահեկան եղաւ մի քանի տեսակէտներով։ Ես առիթ ունեցայ լուսաբանել մի քանի հարցեր, որոնց վերաբերմամբ ճշգրիտ տեղեկութիւններ պակասում էին։ Իմ նստած կուպէում կային մի սպայ, մի թուրք ծերունի, բժշկապետ Տէր-Միքայէլեանը (Սարըղամիշում՝ Բագուի նաւթարդիւնաբերողների խորհրդի հաշուով պահվող հիւանդանոցների կառավարիչը) և Կարսի զինւորական վարչութեան պատկանող մի գնդապետ։

Դուրս եկաւ, որ թուրք ծերունին՝ Փանահ-խանն էր, Մակուի խանի ազգականը, նա, որի որդին՝ Ալի-խանը կազմել է թուրք կամաւորների մի խումբ։ Կային և երկու ռուս տիկիններ, որոնք գնում էին Սարըղամիշ։ Այդ գնացքով ուղևորների թիւը այնքան մեծ էր, որ նոյնիսկ առաջին կարգի կուպէում, ինչպէս տեսնում էք, 7—8 հոգի էին նստած։ Բնականաբար խօսակցութիւնը դարձաւ Սարըղամիշի, Արդահանի և Արդուինի վերջին դէպքերի վրա։ Ես առիթ ունեցայ պարզելու մի քանի կէտեր այն խնդիրների մասին, որոնք արծարծվել են Կարսի ընդհանուր-նահանգապետի վերջերս հրատարակած երկու յայտարարութիւնների հետևանքով, Կարսի մուսուլմանների վրա գործադրված բռնութիւնների առիթով։

Թիֆլիսից Էջմիածին մեր ուղևորութիւնը տևեց 32 ժամ, մինչ առաջ նա կատարվում էր 18 ժամվայ ընթացքում։ Գնացքը ընթանում է դանդաղ և ամեն մի կայարանում երկար կանգ է առնում։ Ինձ հետ գնում էին և ուրիշ պատգամաւորներ, որոնք յայտնեցին, թէ Թիֆլիսում մի խումբ անձինք հեռագրով դիմել են Վեհափառ Կաթողիկոսին և, բացատրելով որ Թիֆլիսի առաջնորդի ներկայութիւնը և մասնակցութիւնը համագումարին կարևոր է, խնդրել են նրան ևս հրաւիրել։ Թէ ինչու է կարևոր կամ ինչու այդպիսի նախամեծարութիւն պէտք է տալ Թիֆլիսի առաջնորդին և չը հրաւիրել նաև միւս առաջնորդներին, ինչպէս Երևանի, Թաւրիզի, որոնք աւելի մօտ են կանգնած գաղթականներին և աւելի սերտ առնչութիւն ունեն նրանց հետ, չը կարողացայ հասկանալ։ Մի հանաքչի պատգամաւոր բացատրեց այդ նախամեծարութիւնը նրանով, որ Թիֆլիսի առաջնորդը փետրվարի 19-ին առաջնորդարանում կայացած մի ճաշկերոյթի ժամանակ բաժանվելով սեղանակիցներից, առանձին, կաթողիկոսական սեղան էր պատրաստել իր համար...

Հասանք Էջմիածին, ինչպէս ասացի, շաբաթ, փետրվարի 18-ին, առաւօտեան ժամը 6-ին, երբ դեռ ամենքը քնած էին։ Միայն ծերունի միաբանները խցերից դուրս գալով, փիլոնը կռնատակին, դիմում էին դէպի տաճար, որի զանգակները մելամաղձօրէն ղօղանջում էին։ Չը կամենալով անհանգիստ անել հիւրընկալ հայր-սուրբին, իրերս թողեցի ծառայի մօտ և ես ևս մտայ եկեղեցի։ Իջման Սեղանի առաջ, որ փակված էր վարագոյրով, յատակի վրա դրված էր մի մեծ ճրագալոյց աման, ձէթով լի, և 40 պատրոյգներով։ Հասկացայ, որ այդ օրը քառասուն մանկանց կատարածի օրն էր։

Եկեղեցուց դուրս գալով քայլերս ուղղեցի դէպի ճեմարան՝ տեսուչ Ս. Մալխասեանցի մօտ։ Սա նոր էր զարթնել։ Այլևս չը վերադարձայ Ղազարապատի հիւրանոցը և մնացի Մալխասեանցի մօտ։

Ժամը 8-ին առաջին այցելութիւնս տուի Եփրեմ սրբազանին, որ Էջմիածնի Գլխաւոր Յանձնաժողովի նախագահն է։ Սրբազանին գտայ բնակարանի մուտքում, շրջապատված բազմաթիւ գաղթականներով։

— Առաւօտեան ժ. 6-ից սկսած,—ասաց նա, —տրիպված եմ զբաղվել, այլապէս անկարելի է գործ տեսնել. ես հիւանդութիւնս անգամ

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 մարտի

ՌԻԲԷ (Իւտլանդիա).— «Ռիբէ-Շտիֆտը-Տիդենդէն» տեղեկութիւն տուաւ, որ 1915 թ. սկզբին Ամերիկայի ափերի մօտ ջրասուզվել է գերմանական «Կարլսրուէ» յածանաւը: Նաւաստիների մի մասը խեղդվեց. կենդանի մնացածներին բերին գերմանական նաւահանգիստը և հրամայվեց խիստ գաղտնիք պահել այդ դէպքը:

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 մարտի

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ.—Այն ազդը, թէ մեծ-բրիտանական և ֆրանսիական կառավարութիւնները մտադիր են ռեպրէսալիաների դիմել՝ ի պատասխանի Գերմանիայի յայտարարած ծովային կռուի պլանի, առաջ բերեց բանակցութիւններ Դանիայի, Նորվէգիայի և Շվէդիայի մէջ, որոնք նպատակ ունեն նըման առաջադրութիւններ ուղարկել յիշեալ երկրների կառավարութիւններին:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Բուխարեստից հեռագրում են, որ դաշնակից էսկադրան Ադրիատիկ ծովում սկսել է նաւապաշարել Տրիէստը:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԲՈԼԳԱՐԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 մարտի

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—«Վիկտօրուլին» հեռագրում են Սօֆիայից.

«Թագաւորական պալատում կայացաւ արքայական խորհուրդ, որին մասնակցում էին օպպօզիցիօն կուսակցութիւնների բոլոր լիդէրները և մինիստր-նախագահը: Խորհուրդը տեղի էր ունենում Ֆէրդինանդ արքայի նախագահութեամբ և յանգեց այն եզրակացութեան, որ Բօլգարիան պէտք է հրաժարվի չէզոքութիւնից և պէտք է պատրաստվի հանդէս գալու:

«Այդ վճռի հետ զուգընթաց՝ սկսվել են բանակցութիւններ օպպօզիցիայի լիդէրների հետ կօալիցիօն կաբինէտ կազմելու նպատակով.

«Բանակցութիւնները, որ վարում է Ռադօսլավօվը, դժուարութիւնների են հանդիպում: Օպպօզիցիայի լիդէրները կամենում են կազմել կաբինէտը դեմօկրատիական կուսակցութեան պարագլուխ Մալինօվի հետ, որի մէջ կը մտնեն Գեշօվը, Դանէվը, Տօդօրօվը և ագրար կուսակցութեան ներկայացուցիչ Ստամբօլիցսկին.

«Ռադօսլավօվի կաբինէտի անկումը մի քանի օրվայ հարց է»:

—

(Լրագիրներից)

◆ Յայտնում են, որ Բօլգարիան զօրքեր է կենտրօնացնում յունական սահմանագլխում և սերբիական սահմանում: Այդ բացատրվում է նրանով, որ Բօլգարիան այլևս չէ կամենում չէզոք մնալ և մօտ օրերս ինչ-որ մի քայլ է անելու, որ անյայտ է պահում առ այժմ:

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 մարտի

ՀՌՈՄ. — Պետական ինքնապաշտպանութեան օրէնքը, որ հալածում է լրտեսութիւնը, դեռ մինչև իր ույժի մէջ մտնելը խոշոր հետևանքների հասաւ: Շատ անձինք զանազան քաղաքներից մեկնում են Աւստրիա և Գերմանիա, ուրիշները շտապում են գրաւել որևէ պաշտօն, որպէսզի կարողանան մնալ Իտալիայում: Մինիստրական հրովարտակով շատ աւստրիացիներ արտաքսվեցին:

Վերջին օրերի հաղորդագրութիւններից երեւում է, որ աւստրիացիք շարունակում են փութանակի ամրացնել Տրէնտոյի շրջանը, մանաւանդ Մօնտէ Բալդոյի ամրութիւնները, որ գտնվում է հէնց իտալական սահմանի մօտ:

«Տրիբունային» Վիէննայից հաղորդում են, որ աւստրիական կառավարութիւնը հնարաւոր է համարում՝ տէրրիտօրիալ զիջումներ անել Իտալիային միայն այն պայմանով, որ երկիրները տրվեն պատերազմից յետոյ: Մինչ այդ՝ երաշխաւորութիւն կը տայ Գերմանիան: Այսօրինակ յայտարարութիւնը զարմանք է առաջ բերում, վասն զի եթէ Գերմանիան և Աւստրիան պարտվեն, այն դէպքում հնարաւորութիւն չեն ունենայ ազատ կերպով կարգադրել իրանց երկիրները. իսկ նրանց յաղթութեան դէպքում Գերմանիայի երաշխաւորութիւնը, որ խախտել է Բէլգիայի չէզոքութեան պայմանագիրը, անյուսալի է:

ՉԻՆ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
5 մարտի

ՏՕԿԻՕ.—Նախընտրական ագիտացիայի ժամանակ ընտրողների առաջ արտասանած իր ճառում Օկուման հաւատ արտայայտեց, որ Չինաստանի հետ կատարվող բանակցութիւնները կաւարտվեն աջողակ: Օկուման ընդգծեց, որ Ռուսաստանը, տիրելով Կ. Պօլսին և Դարդանէլին ու ստանալով սառոյցով չը ծածկվող նաւահանգիստներ, կը հրաժարվէ ակտիվ քայլերից Հեռաւոր Արևելքում, և որ Ճապոնիայի պրէստիժը բարձրացել է համաեւրոպական պատերազմին մասնակցելու շնորհիւ: Օպպօզիցիան մեղադրում է կաբինէտին նրանում, որ Չինաստանին պահանջները չառաջադրվեցին միաժամանակ Ցինդաօն վերցնելու հետ, որ կը դիւրացնէր բանակցութիւնները, եթէ կառավարութիւնը դրա հետ միասին խորհրդակցէր Ռուսաստանի հետ և հաւաստիանար նրա աջակցութեանը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՎԱՂՎԱՅ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Վաղը, կիրակի, մարտի 8-ին, երեկոյեան ժամը 8-ին, Արտիստական Ընկերութեան դահլիճում Վարշավայի համալսարանի պրօֆէսոր Կ. Ս. Աղաջանեանը կարդալու է մի դասախօսութիւն «Նպաստամատոյց Ընկերութեան» հրաւէրով յօգուտ հայ փախստականների:

Յարգելի պրօֆէսորը դասախօսութեան նիւթ է ընտրել մի այնպիսի թէմա, որ մեծ շահեկանութիւն է ներկայացնում գիտութեան տեսակէտից՝ «Բռնազբօսիկ և զառանցային գաղափարների և մասսային պսիխօզների մասին» վերնագրով: Բացի նիւթի շահեկանութիւնից, դասախօսութեան նպատակն էլ խիստ համակրելի է. արդիւնքը յատկացված է հայ փախստականների օգտին:

Գիտութեան մարդը հանդէս է գալիս իր լուման ևս ձգելու այն ընդհանուր գանձանակի մէջ, որ սահմանված է ամոքելու տասնեակ հազարաւոր դժբաղդների դառն վիճակը: Մնում է, որ հասարակութիւնը վարձատրէ դասախօսին և իր ներկայութեամբ միջոց տայ նրան իրագործելու բարի նպատակը և լսելու հայ գիտնականի բերանից գիտութեան խօսքը:

ՏԱՍՆԱՄԵԱՅ ՍԳԱՀԱՆԴԷՍԸ

Հայ Երաժշտական Ընկերութեան Վարչութիւնը վաղը կատարում է իր անմիջական պարտականութիւնը հանդէպ երաժշտագէտ Մակար Եկմալեանի յիշատակի, նրա մահվան տասնամեակի առիթով:

Խորին յարգանքի արտայայտութիւն է վաղվայ հանդիսաւոր հոգեհանգիստը այն մեծանուն գեղարուեստագէտի յիշատակին, որ տուեց իր ժողովրդին իր հոգու և մտքի վեհ ապրումների մեծարժէք արդիւնքը:

Հայ հոգևոր երաժշտութիւնը ենթարկելով տաղանդաւոր ներդաշնակութեան, Եկմալեան առաջ բերեց կուլտուրական ազգերի հիացմունքը դէպի այդ երաժշտութիւնը:

Զէ որ գեղարուեստը հայրենիք չունի: Փոքրիկ հայ ազգը իրաւամբ պարծենում է այդ տեսակէտից հանգուցեալ երաժշտագէտով:

Եւ վաղը, տաս ամբողջ տարի անցնելուց յետոյ, Խօջիվանքի մշտական խորհրդաւոր լռութիւնը պէտք է խանգարվի Եկմալեանի հողաթումբի շուրջ բոլորած հոծ բազմութեամբ, որ իր սրտի խորքում մի անկեղծ վիշտ է սնուցում՝

— Ափսոս...

Ափսոս, որ այնքան շուտ հանգաւ Եկմալեանի սաւառնող հոգին, այնքան շուտ խորտակվեց նրա դայլայլիկ քնարը...

Որովհետև նա դեռ շատ գոհարներ պէտք է տար իր ստեղծագործութիւններից հայ աղքատ երաժշտութեանը:

— Ափսոս Եկմալեան...

Քո պայծառ դէմքը, սակայն, միշտ էլ քո յիշատակը յարգողների աչքերի առաջն է:

Բոլորը իրանց խորին յարգանքն են մատուցանում քո մեծ յիշատակին քո «Հայր Մեր»-ի քաղցրաձայն երգեցողութեան հնչիւնների հետ միախառնած...

Ռեցենզենտ

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼԵԱՆԻ ՀԵՏ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՍ

(Մահվան 10-ամեայ տարելիցի առիթով)

—

1896 թ. յունիսի սկիզբներն էր:

Մոսկվայում թագադրութեան փառահեղ հանդէսները տեսնելուց յետոյ՝ մասնաւոր գործով գնացի Պետրօգրադ: Իբրև ամենամօտ ծանօթներ, այդտեղ ես շրջում էի յաճախ անուանակից Մակար Վարդիկեանի և «Արաքսի» խմբագիր Սիմէօն Գուլամիրեանի հետ:

Մի օր երբ Վարդիկեանի հետ անցնում էի «Գօստինի դվօրի» վերնայարկով, պատահեց մեզ մի միջահասակ, լղարիկ կազմուածքով, սևաւամօրուս, մազերը ու կոկ հարդված, կաշուէ գունաւոր ձեռնոցներով, շատ բարակ ձեռնափայտով ու ձեռքին պօրտֆէյլ բռնած մի երիտասարդ, որին տեսնելով՝ Վարդիկեանը դիմեց ինձ.

— Մակար ջան, խնդրեմ ծանօթանաք. պ. Մակար Եկմալեան:

Մի ինչ-որ կարծես ուրախութիւն զգացի այսպիսի հեռու հիւսիսում օտարութեան մէջ, երկրորդ անուանակից ծանօթ ևս գտնելուս համար և անմիջապէս ձեռքը սեղմելով շտապեցի պատասխանել.

— Շատ ուրախ եմ. Մակար Ջմշկեան:

— Վա՛հ,—իր տեսակի կիսաժպիտով բացականչեց շնորհալի ձայնագրագէտը.—հէնց ինչ այսպէս անսպասելի՝ հարաւից դէպի հիւսիս երեք անուանակիցներ հանդիպեցինք: Հետաքրքրական հանդիպում:

— Ուրիշ անուններով գուցէ շատերը լինեն, բայց հէնց Թիֆլիսումն էլ շատ քիչ մարդ կայ «Մակար» անունով,—վրա բերեց Վարդիկեանը:

Ապա, դէսից-դէնից, ազգային օրվայ հարցերից՝ Սասունի դէպքերից, Մոսկվայի հանդէսներից, Խօդինկի դաշտում պատահած կատաստրօֆայի ու այլ հարցերի մասին խօսակցելուց յետոյ բաժանվեցինք:

Այնուհետև Պետրօգրադում մնացածս կարճ ժամանակամիջոցում մի քանի անգամ հանդիպեցի Մ. Եկմալեանին՝ հայոց եկեղեցում (կիրակիները), կենդանաբանական այգում և Ֆիլիպօվի կօնդիտերսկիում: Իսկ Թիֆլիսում համարեա ամեն կիրակի հանդիպում էինք և միշտ միասին կանգնում Վանքի եկեղեցու հիւսիսային դռան կողմի վերջին սիւնի մօտ, որտեղից սովորութիւն ունէր նա հետևելու Ներսիսեան դպրոցի իր աշակերտների խմբի երգեցողութեանը:

Մի կիրակի օր Վանքի մայր եկեղեցում մի ինչ-որ հոգեհանգստի առիթով, Թիֆլիսի beau monde-ից ներկայ էր ահագին բազմութիւն, որի շարքում և շատ օտարազգիներ: Երբ ես մօտեցայ Եկմալեանին, նա դիմեց ինձ վրդովված.

— Պ. Մակար, մի տես է, թէ ի՛նչ խառնաշփոթ են անում (խմբի մասին էր ասում). էն էլ ի՛նչ հէնց այսօր, երբ այսպիսի ընտիր հասարակութիւն է ներկայ: Չեմ կարողանում այլ ևս լսել:

Այս ասելով վրդովված դուրս գնաց:

Ես հետևեցի իրան և սկսեցի հանգստացնել: Շուտով մեր խօսակցութիւնը անցաւ հայոց եկեղեցու երգեցողութեան և հին շարականների եղանակների փոփոխութեանը: Խօսակիցս ասաց ինձ.

— Մակար, ինձ ասացին, որ դու բաւական տեղեակ ես մեր շարականների հին եղանակներին. եթէ կարելի է, իբրև նմուշ մի քանի շարական կամաց երգիր, լսեմ:

Ես, որպէս զի նրա վրդովմունքը մոռացնել տամ, նրա խնդիրը յարգեցի: Եւ հայկական եկեղեցու, Էջմիածնի, Երուսաղէմի և Կ. Պօլսի երեք տեսակ եղանակներից երգեցի, որի ժամանակ մի առանձին ժպիտով լսելով՝ ասում էր.

— Հրաշալի է. ճիշդ որ իսկական հայկական եղանակով էք երգում, և ինձ թւում է, որ Հմայեակ վարդապետի երգած եղանակը շատ նմանութիւն ունի ձեր երգած այդ շարականների եղանակներին:

Ապա նա շատ զարմացաւ, երբ պատմեցի, թէ Շնորհալու «Առաւօտ լուսոյ» շարականը չը նայելով որ Կիլիկիայում՝ Հռոմկլա է երգվել XI դարում, բայց ներկայումս Վրաստանումն էլ են երգում հարսանեկան հանդէսների միջոցին՝ նորապսակներին եկեղեցուց դուրս բերելիս: Այդտեղ վրացի փողհարները (զուռնաչի) մինչև անգամ սովորութիւն ունեն այդ քաղցրաձայն երգի եղանակը նուագելու:

Պատարագն արդէն վերջացել էր եկեղեցում, հոգեհանգիստն աւարտվել և Եկմալեանի վրդովմունքն էլ անցել: Նա նայելով իր ժամացոյցին ասաց.

— Արդէն ժամը 1 3/4-ն է: Եւ թէև անչափ շահեկան բաներ ես պատմում և այնքան բազմաթիւ տեղեկութիւններ տալիս իմ նիւթերին վերաբերեալ, բայց ափսոսում եմ, որ ստիպված եմ քեզանից բաժանվել:

— Մակար ջան,—դիմեցի նրան,—հրամեցէք հէնց ճաշին գնանք մեր տուն. մեր խօսակցութիւնը այնտեղ կը շարունակենք: Սիրած շարականներդ ջութակով ու քամանչով ներդաշնակած կերգեմ:

— Անչափ շնորհակալ եմ, անպատճառ կը գամ, սակայն ոչ այսօր, այլ առաջիկայ կիրակի, և այն էլ ոչ թէ ճաշին, այլ երեկոյեան ժամը 6-ին:

Նշանակված օրն ու ժամին երկար սպասեցի, բայց Եկմալեանը չեկաւ: Հետևեալ կիրակին ստիպված մի քանի օրով Բաթում գնացի: Երբ վերադարձայ, տեղեկացայ որ տկարացել է և ոչ ոքի չեն ընդունում, որովհետև ջղային հիւանդութեամբ հիւանդացած լինելով՝ բժիշկները կարևոր են համարում լիակատար հանգստութիւն:

Յետագայում նրա հիւանդութիւնը բարդացաւ, այնպէս որ նրան ստիպված եղան զետեղել Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցի հոգեկան հիւանդների բաժանմունքում, ուր սրանից 10 տարի առաջ կնքեց իր մահկանացուն մեր տաղանդաւոր երգահանը:

Մակ. Ջմշկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ «Մշակի» հետևեալ համարը, Գրիգոր Լուսաւորչի տօնի պատճառով, լոյս կը տեսնի երեքշաբթի, մարտի 10-ին:

◆ «Մշակի» խմբագիր Հ. Առաքելեան, որ գնացել էր մասնակցելու Էջմիածնի համաժողովին, երէկ, մարտի 6-ին, առաւօտեան վերադարձաւ Թիֆլիս:

◆ Թիֆլիսի Հայոց Երաժշտական Ընկերութեան վարչութեան նախաձեռնութեամբ, հայ և օտար հասարակութեան ներկայութեամբ, վաղը, կիրակի, ամսիս 8-ին, ցե-

---

մնացել եմ. մենք, Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Կարգադիր Յանձնաժողովի անդամներս, հանգիստ և քուն չունենք. բայց 6 հոգի անկարող է կատարել այս ահագին աշխատանքը. եկէք, աշխարհականներդ, մտէք մեր կազմի մէջ և աշխատեցէք. գրկաբաց կընդունենք:

Այնուհետև սրբազանը, պատասխանելով իմ հարցերին, տուեց մի քանի տեղեկութիւններ գաղթականներին օգնելու գործի մասին և այն պլանը, որով Կարգադիր Յանձնաժողովը վարում է օգնութեան գործը:

Ժամը 9-ին մտայ դիւանապետ Բագրատ սրբազանի և Մաթէոս սրբազանի մօտ: Երբ ներկայացրի դիւանապետին այն գրութիւնը, որ ծանուցանում էր իմ ընտրութիւնը իբրև ներկայացուցչի Թիֆլիսի Քաղաքային Յանձնաժողովի՝ մասնակցելու համագումարին, սրբազանները յայտնեցին, որ Թիֆլիսի Քաղաքային Յանձնաժողովը չը լինելով զուտ հայկական՝ չէ կարող ունենալ վճռական ձայն համագումարի մէջ, բայց որովհետև նա ևս խնամում է հայ գաղթականներին, ուստի կարելի է նրա ներկայացուցչին տալ խորհրդակցական ձայն: Յայտնվեց նաև, որ մի քանի կոմիտէտներ և քաղաքներ ևս ուղարկել են ներկայացուցիչներ, թէև չեն հրաւիրված, ինչպէս պարսկահայերի կոմիտէտը, Ղրիմի քաղաքները: Ես կարծիք յայտնեցի, որ, ի հարկէ, եթէ դրվում է այն սկզբունքը, թէ համագումարին պէտք է մասնակցեն միայն զուտ հայկական մարմինները, այդ դէպքում ոչ միայն Թիֆլիսի Քաղաքային Յանձնաժողովը չը պէտք է մասնակցէ, այլ և Հին-Նախիջևանի մասնաժողովը, որ թէև գործում է Ներսէս եպիսկոպոսի նախագահութեամբ, բայց համարվում է գաւառական կոմիտէտ և ոչ զուտ հայկական, քանի որ օգնում է նաև ասորի և այլ փախստականներին, բայց պարսկահայերի, Ղրիմի քաղաքների կոմիտէտներին պէտք է իրաւունք տրվի մասնակցել. ի վերջոյ որոշվեց այդ հարցի վերջնական լուծումը թողնել Վեհափառ Կաթողիկոսին:

Ժամը 10-ին, ես պատիւ ունեցայ ներկայանալու Վեհափառ Կաթողիկոսին և, մօտ մի ժամ տևող այդ ունկնդրութեան ժամանակ, ես նորից համոզվեցի, որ Գէորգ V Կաթողիկոսը ամենամեծ հետաքրքրութեամբ, ուշադրութեամբ և մանրամասնութեամբ մտնում է այն բոլոր ազգային կարևոր հարցերի մէջ, որոնք արծարծվել են վերջին տարիներս, և գործերի ընդհանուր ղեկը, առաջնորդութիւնը իր ձեռքումն է պահում:

Ճաշից յետոյ ես այցելեցի Ստ. Մալխասեանցի հետ միասին Միաբանին (Գալուստ Տէր-Մկրտչեանին), որի հետ ամեն անգամ մեծ հաճոյքով խօսակցում ենք մեր ազգային և բանասիրական հարցերի մասին:

Երեկոյեան դէմ մի քանի պատգամաւորներ ևս եկան: Յայտնվեց, որ թեմակալ առաջնորդներից ոչ ոք չէ հրաւիրված. գալու է միայն Երևանի առաջնորդ Խորէն եպիսկոպոսը ոչ իբրև առաջնորդ, այլ իբրև նախագահ Երևանի յանձնաժողովի: Յայտնվեց որ Վեհափառ Կաթողիկոսը չէ բարեհաճել յարգել Թիֆլիսից արված միջնորդութիւնը Մեսրոպ եպիսկոպոսին հրաւիրելու մասին: Եւ, իսկապէս, ոչ մի հիմք և հարկ չը կար առանձնաշնորհումներ անելու այս և այն անձի վերաբերմամբ: Թիֆլիսն արդէն ունի բաւականաչափ ներկայացուցիչներ, և նրա թեմ. առաջնորդը ոչ մի բան չէր աւելացնի նրանց վրա, այլ գուցէ վնասէր նաև գործին իր այնպիսի անտակտ վարմունքով, որպիսին նա ցոյց տուեց վերջերս Թիֆլիսում մի քանի հաւաքոյթների մէջ:

—

Մարտի 1-ին

Կիրակի օր. պատգամաւորները եկել են. նրանց թիւն է 19. սկսվել է պատարագը, որ վերջանում է ժամը 11-ին. պատգամաւորները հաւաքվում են վեհարան. կէս ժամից յետոյ նրանց ընդունում է Վեհ. Կաթողիկոսը իր սովորական դահլիճում: Ողջունելով պատգամաւորների գալուստը, Վեհը յայտնում է իր թախիծը, վիշտը այն մեծ աղէտի համար, որ հասել է հայ ժողովրդին, որ ստիպված եղաւ փախչել իր ծննդավայրից և ապաստան որոնել իր ռուսահայ եղբայրների մօտ: «Բայց,—շարունակեց Հայրապետը,—մեծ է հայութեան Աստուածը. հաւատ և յոյս ունենանք. եթէ Աստուած կամենայ, կարող է քարերից յարուցանել զաւակներ Աբրահամի համար»: Այս ակնարկը արեց Վեհը, երբ ասաց, որ փախստականներից շատերը ճանապարհին մահացել են ցրտից, քաղցից և այլ աղէտներից, և մենք պարտաւոր ենք ամեն կերպ հոգ տանել, որ Մայր Հայաստանը չը դատարկվի իր զաւակներից: Ապա Կաթողիկոսը յայտնեց, որ հարկաւոր է համարել կանչել փախստականներին օգնող կազմակերպութիւնների ներկայացուցիչներին, խորհրդակցելու համար թէ ինչ իրական միջոցներ պէտք է գործ դնել օգնութեան գործը հիմնաւոր, ռացիօնալ հիմունքների վրա դնելու, ինչ միջոցներ պէտք է մշակել նրանց հայրենիք վերադարձնելու և քայքայված տնտեսութիւնը վերականգնելու համար: «Հաւաքվեցէք,—վերջացրեց Վեհը իր խօսքը,—Յուսիկ արքեպիսկոպոսի նախագահութեամբ, մտածեցէք, խորհրդակցեցէք և հետևանքը զեկուցէք ինձ»:

Պատգամաւորների կողմից Երևանի յանձնաժողովի ներկայացուցիչ պ. Մուսինեանը շնորհակալութիւն յայտնեց Վեհին՝ գեղեցիկ նախաձեռնութեան համար՝ խորհրդակցելու ժողովրդի ներկայացուցիչների հետ:

Ժամը 1-ին պատգամաւորները հաւաքվում են Մատենադարանի մեծ դահլիճը, ուր Յուսիկ արքեպիսկոպոսը կարդում է Կաթողիկոսի հետևեալ կօնդակը, որ լսվում է յոտնկայս:

Կօնդակը գրված է փետրվարի 24-ին, ընդ № 324, Յուսիկ արքեպիսկոպոսի անունով.

«Հրամանաւ Մերով հրաւիրեալ կան աստ՝ ի ս. Էջմիածին ի խորհրդակցութիւն ներկայացուցիչք Յանձնաժողովոյ Եղբայրական Օգնութեան, ընկերութեանց և հաստատութեանց, որք ջանան օգնել ըստ ամենայնի և օժանդակել գաղթականաց մերոց հոգալով զպէտս և զկարիս նոցա և բժշկելով զբարոյական և զնիւթական վէրս դժբաղդ զաւակաց մերոց:

«Այսու Հայրապետական կոնդակաւ Մերով նշանակելով զձեզ Նախագահ համաժողովոյ, պատուէր տամք գերապատուութեան ձերում ղեկավարել զխորհրդակցութիւնս, զօրակարգ որոց տամք ըստ այսմ.

«1) Հաստատել զմիաբար և զհամերաշխ գործունէութիւն ի մէջ ամենայն յանձնաժողովս և ընկերութեանց, որք գործեն յօգուտ գաղթականաց մերոց:

«2) Կազմակերպել զգործ օգնութեան և պահպանութեան նոցա ի կովկասեան քաղաքս և ի գիւղօրայս:

«4) Զեկուցագիրք և հաշուետուութիւնք յանձնաժողովոց և՝

«5) Վերադարձ գաղթականաց ի բնակավայրս իւրեանց և բարւոքումն տնտեսութեան նոցա:

«Լիայոյս եմք զի ամենեքին կատարեսցեն զպարտիս իւրեանց լրջմիտ խոհականութեամբ և ամենայն հեռատեսութեամբ, մշակելով զիրագործելի նախապիծ ապագայ գործունէութեան յօգուտ գաղթականաց մերոց: Յետ որոյ մատուցանել Մեզ զարդիւնս և զարձանագրութիւնս խորհրդակցութեանց ի տես և ի տնօրինութիւն Մեր»:

Նախագահ Յուսիկ արքեպիսկոպոսը, յայտարարելով համաժողովը բացված, կցում է, որ Վեհ. Կաթողիկոսը կարգադրել է, որ Թիֆլիսի Քաղաքային Յանձնաժողովի ներկայացուցիչ պ. Հ. Առաքելեան, Ղրիմի քաղաքների ներկայացուցիչ պ. Օբերեան և պարսկահայ կոմիտէտի ներկայացուցիչ Ս. Աւագեան մասնակցեն համաժողովին խորհրդակցական ձայնով: Ժողովականներից շատերը առաջարկում են տալ այդ երեքին վճռական ձայնի իրաւունք և ոչ խորհրդակցական. ոմանք (բժ. Մինասեան, Ա. Ղազարեան, Ա. Թադէոսեան) առաջարկում են վճռական ձայն տալ վերջին երկուսին, իսկ առաջինին տալ խորհրդակցական ձայն, պատճառաբանելով թէ առաջինը զուտ հայկական հաստատութեան ներկայացուցիչ չէ, թէև խնամում է հայ փախստականներին: Ճնշող մեծամասնութեամբ որոշվում է տալ բոլոր երեքին ևս վճռական ձայնի իրաւունք, միջնորդելով այդ մասին Վեհափառի առաջ: Այդ որոշումից յետոյ Ա. Ղազարեան և Ա. Թադէոսեան, յայտնելով որ Էջմիածին է եկել Ս. Տիգրանեանը, թէև ոչ պատգամաւոր և ներկայացուցիչ որևէ գաղթականական հաստատութեան, բայց ի նըկատի ունենալով որ նա օգտակար խորհուրդներ կարող է տալ, առաջարկում են նրան ևս ընդունել անդամ և տալ վճռական ձայն: Ոմանք առաջարկում են տալ միայն խորհրդակցական ձայն, քանի որ նա հանդէս է գալիս իբրև անհատ, սակայն ժողովը համաձայնում է ի վերջոյ խնդրել Վեհափառին, նրան ևս տալ ձայնի իրաւունք:

Այս հարցին նորից չը դառնալու համար հարկաւոր է ասել, որ Վեհ. Կաթողիկոսը, լսելով Նախագահի զեկուցումն այդ մասին, կարգադրեց՝ տալ վերոյիշեալ երեքին վճռական ձայնի իրաւունք և ճանաչել նրանց համաժողովի անդամ, իսկ պ. Ս. Տիգրանեանին տալ միայն խորհրդակցական ձայն:

Այդպիսով համագումարի կազմը որոշվեց այսպէս. 22 պատգամաւորներ և Էջմիածնի գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովի 6 անդամները, թւով 28 հոգի:

Նիստը փակվեց ժամը 3-ին, երեկոյեան գումարվելու որոշումով:

Հ. Ա.

(Կը շարունակվի)

րեկվայ ժամը 11-ին, Խօջիվանքի եկեղեցում տեղի կունենայ հանդիսաւոր պատարագ և ապա հոգեհանգստեան կարգ՝ ժամը 12½-ին, հանգուցեալ երաժշտագէտ Մակար Եկմալեանի գերեզմանի վրա՝ նրա մահվան տասնամեակի առիթով։ Պատարագին Տիգրան Նալբանդեան և Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի երգեցիկ խումբը։

◆ Էջմիածնից վերադարձան այնտեղի համաժողովին մասնակցող Թիֆլիսի ընկերութիւնների պատգամաւորները։

◆ Վաղը, Հաւլաբարի կլուբի դահլիճում, ցերեկվայ 12½ ժամին ժողովրդական համալսարանի հայկական սեկցիայի նախաձեռնութեամբ տեղի կունենայ մի հանրամատչելի դասախօսութիւն։ Հայերէն լեզուով դասախօսելու է բժ. Մելիք-Նուբարեանը «Վարակիչ հիւանդութիւնները» նիւթի մասին։ Մուտքի վճարը 5 և 10 կոպէկ։

◆ Այսօր, երեկ. ժամը 8-ին, Աշխարհագրական Ընկ. դահլիճում (Մօսկօվսկայա, № 3) կայանալու է Մօսկվայի հնագիտական ընկ. Կովկասի ճիւղի անդամների նիստը, որտեղ կարդացվելու է տարեկան հաշիւը, և Լ. Մելիքսէթ-բէկեան կարդալու է մի զեկուցում «Армазы» նիւթի մասին։ Նիստը դռնբաց է։

◆ Նահանգապետը յայտնել է քաղ. վարչութեան, որ էլեկտրաքարշի գնումը քաղաքի կողմից, իր ունեցած տեղեկութիւնների համաձայն, հիմք է եղել ծառայողների մէջ կասկածանք յարուցանելու, թէ որ չափով են պահպանելու իրանց այժմ եղած պարտադիր որոշումները, որ ընդունել էր անոնիմ ընկ.-ը ծառայողների վերաբերմամբ, որոնց մէջ որոշված են ծառայողների իրաւունքները պաշտօնից հեռացվելու դէպքում վարձատրութիւն ստանալու մասին։ Ի նկատի ունենալով, որ էլեկտրաքարշի ծառայողները ծառայութեան մէջ են էլեկտրաքարշի նախաձեռնութեան մէջ և ոչ թէ անոնիմ ընկ., որպէս այդպիսին, նահանգապետը կարծում է, որ էլեկտրաքարշի գնումով քաղաքի կողմից, բնականաբար, քաղաքի համար էլ պարտադիր պէտք է լինեն պայմանական բնոյթ կրող այն պարտադիր որոշումները, որ գոյութիւն ունէին նախաձեռնութեան և ծառայողների միջև։ Ամեն տեսակ թիւրիմացութիւնների առաջն առնելու համար, որ կարող են անցանկալի բարդութիւններ առաջացնել էլեկտրաքարշը քաղաքին յանձնելու դէպքում, նահանգապետը կարևոր է գտնում, որ քաղաքը իր վրա վերցնի յիշված պարտաւորութիւնները, նաև կանոններում եղած բոլոր կէտերը։ Վերջում նահանգապետը առաջարկում է քաղ. վարչութեան՝ շտապով յայտնել, թէ վերջինս վերցնում է արդեօք իր վրա այդ պարտաւորութիւնները։

◆ Կ. Հ. Բ. Ընկերութիւնը Ախալքալաքի ճիւղին մէկ վագօն տաք հագուստեղէն ուղարկեց այնտեղ գտնվող գաղթականներին բաժանելու։

◆ Կովկասի քաղաքների միութեան բիւրօն Աստրախանի նահանգական կոմիտէտից ստացել է 51 արկղ տաք իրեր։

◆ Կազանի համալսարանի պրոֆ. Ա. Գ. Աղաբաբեան Ալ. Խատիսեանի անունով ուղարկել է 901 ր. 87 կ. փախստականների օգտին։ Այս գումարը ստացվել է Կազանի հայկական գաղութի ձեռքով յունվարի 24-ին կազմակերպված երեկոյթից։

◆ Թերէքի շրջանի հայկական գաղութը Ալ. Խատիսեանին ուղարկել է 901 ր. 95 կ., որպիսի գումարը գոյացել է այնտեղ կազմված ներկայացումից։

◆ Մարտի 5-ին Թիֆլիս եկաւ Մօսկվայից Պետ. Դումայի անդամ Մ. Մ. Նովիկօվ, որպէս համառուսական քաղաքների լիազօր։ Նա իր հետ բերել է 100,000 ր. Կովկասի փախստականներին բաժանելու համար։ Հէնց նոյն օրը կայացաւ խորհրդակցութիւն մասնակցութեամբ Մ. Մ. Նովիկօվի, Ս. Տ. Վարուն Սեկրէտի, Ալ. Խատիսեանի և իշխան Սումբատովի, քննելու այն հարցը, թէ ինչպէս պէտք է բաժանվի փախստականներին Նովիկօվի բերած 100 հազար րուբլին։

◆ Կովկասի քաղաքների միութեան սանիտարական և մթերատար խումբը գործող բանակն է ուղևորվելու մարտի 25-ին կամ 27-ին։ Խումբն ունի 20 պատգարակ, 50 առանձին պատգարակ, որոնք յարմարեցված են ձիերի մէջքին, 125 ձի և ջորի և 100 ձիապան, բժիշկների և ֆելդշերների համապատասխան կազմ։ Խմբի ղեկավարն է Գ. Ն. Տէր-Ղևոնդեան։

◆ Այսօր, մարտի 7-ին, Ակակի Ծերեթելիի քառասունքի օրը, կայանալու է հոգեհանգիստ հանգուցեալի գերեզմանի վրա։

◆ Թիֆլիսում հաստատ տեղեկութիւններ են ստացվել այն մասին, որ ներկայ մարտի 5-ին, Դուշէթի գաւառի ադմինիստրացիան տեղեկութիւններ է ստանում, որ Բազալէթի գիւղում, գիւղացի Վերձաուլի տանը, պահվում են աւազակներ։ Այդ տունը իսկոյն շրջապատում են 12 ստրաժնիկ գաւառապետ իշխ. Բարաթովի գլխաւորութեամբ։ Հրացանաձգութեան ժամանակ սպանվում են տեղական աւազակներ Զօչիլի, Պերմիաշվիլի և Պօցխվերաշվիլի. վիրաւորվում են երկու ստրաժնիկ։ Աւազակներից վերցնում են մի քանի հրացան «Մաուզէր» և «Սմիտ և Վիսսօն» սիստեմի։

◆ Բագուի Մարդասիրական Ընկ. և Հայոց Կուլտուրական Միութիւնը փոխարքայից, նրա 10-ամեակը շնորհաւորելու առիթով, ստացել են շնորհակալական հեռագիրներ։

◆ Թիֆլիսի ոստիկանապետի օգնական է նշանակվել Կարսի ոստիկանապետ իշխ. Լորդկիպանիձէն։

◆ «Закавк. Рѣчь»-ը հաղորդում է, որ տեղական Թուրքերը իրանց «Նովրուզ-բայրամ» տօնը կատարելու են նոր-ակումբում։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Сборникъ Дипломатическихъ Документовъ. Реформы въ Арменіи. 26 ноября 1912 г.—10 мая 1914 года. Изд. Министерства Иностр. Дѣлъ Петроградъ, 1915 г.

(Ժողովածու Դիպլօմատիկան Դօկումենտների։ Ռէֆորմները Հայաստանում։ 26 նոյեմբեր 1912 թ. սկսեալ ց10 մայիս 1914 թ.։ Հրատար. արտաքին գործերի մինիստրութեան)։

XIV

Նարնջագոյն Գրքի 74-րդ դօկումենտն է Գերմանիայում ռուսական գործերի հաւատարմատարի հեռագիրը Սազօնովին, սեպտ. 3-ին, թէ Եագօվը իրան յայտնել է, որ ռեֆօրմների հարցը հարթվում է, որ Գիրսն ու գերմանական դեսպանն արդէն համապատասխան հող են գտել համաձայնութեան համար, որ Գիրսը իբր թէ համաձայնվել է փոխել հայկական վիլայէթները սեկտորների բաժանելու միջոցը, յարմարվելով Թիւրքաց նոր օրէնքի հետ, իսկ Վանգենհէյմը վիճելու է ներկայացուցչական հարցում (որ հայկական վիլայէթների ազգաբնակութիւնը՝ անկախ քանակից՝ հաւասար թւով ներկայացուցչութիւն ունենայ տեղական խորհուրդներում) և ընդհանուր նահանգապետների հարցում։ Եագօվը յայտնել է, որ Վանգենհէյմին տուած իր խորհուրդներն են եղել պատճառը, որ ստացվել է այդ հետևանքը։

75-րդը՝ Գիրսի հեռագիրն է Սազօնովին, սեպտ. 4-ից, թէ ինքը վերատեսուչների հարցի մասին խօսակցութիւն է ունեցել Վանգենհէյմի հետ ռուսական ծրագրի համաձայն։ Վերջինս անձամբ համաձայնել է Գիրսի հետ և կամեցել է իմանալ Բեռլինի կարծիքը։

76-րդը՝ Ներատօվի հեռագիրն է Ֆրանսիայի և Անգլիայի ռուսական դեսպաններին, սեպտ. 6-ից, որով յայտնվում է վերջիններիս ի գիտութիւն, թէ Հայաստանի ռեֆօրմների գործում առաւել ընդդիմութիւն է ցոյց տալիս Գերմանիան և այլն։

77-րդը՝ Ներատօվի հեռագիրն է Գիրսին, սեպտ. 6-ից, թէ ցանկալի կը լինէր պետութիւնների միջև համաձայնութիւն կայացնել, յետոյ պատասխանել Թիւրքերին, այլ կերպ՝ այդ տարաձայնութիւնը կամրապնդէ Թիւրքերի ընդդիմութիւնը։

78-րդը՝ Գիրսի հեռագիրն է Սազօնովին, սեպտ. 10-ից, թէ ինքը և գերմանական դեսպանը համաձայնել են իրար հետ ամեն ջանք գործ դնել, որպէսզի Բ. Դուռը և միւս դեսպանները ընդունեն ռեֆօրմների ծրագիրը, որը բովանդակում է երկու վերատեսուչների, մուսուլմանների և հայերի՝ խորհրդակցութիւնների մէջ հաւասար թւով ներկայացուցիչներ ունենալու, պետութիւնների՝ ռեֆօրմների վրա հիւպատոսների միջոցով վերահսկողութիւն ունենալու մասին եղած 6 կէտերը։

79-րդը՝ Գերմանիայի ռուսական գործերի հաւատարմատարի հեռագիրն է Սազօնովին, թէ Եագօվը շատ գոհ է կայացած համաձայնութիւնից, որի մասին տեղեկացնելու է աւստրո-ունգարական և իտալական կառավարութիւններին։

80-րդը՝ Անգլիայի ռուսական գործերի հաւատարմատար Էտտէրի հեռագիրն է Սազօնովին, սեպտ. 11-ից, թէ սըր Նիկոլսօնը (Գրէյի օգնականը) յայտնել է իրան, որ Ռուսաստանի և Գերմանիայի միջև տեղի ունեցող բանակցութիւնները հայոց գործերի մասին ամբողջապէս համապատասխանում են Էդ. Գրէյի ցանկութեան. հարցի նման ուղղութեամբ առաջ տանելը առաւել ճիշդ միջոցն է վտանգաւոր բարդութիւններից խուսափելու, որ կարող են ծագել փոքր-ասիական փոխադարձ շահերի հողի վրա։

81-րդը՝ Ներատօվի հեռագիրն է Ֆրանսիայի և Անգլիայի ռուսական գործերի հաւատարմատարներին, սեպտ. 11-ից, թէ կայսերական կառավարութիւնը հաւանութիւն է տուել ռեֆօրմների ծրագրի կէտերին, որ հաղորդել էր Գիրսը։ Ներատօվը միաժամանակ յայտնում է, որ հաւատարմատարները ծրագիրը յանձնեն կառավարութիւններին, որ նրանք հրահանգեն Թիւրքիայի իրանց ներկայացուցիչներին, որպէսզի սրանք պաշտպանեն Գիրսի առաջարկութիւնը, Բ. Դռան առաջ, որ վերաբերում է ռեֆօրմների հարցին։

82-րդը՝ Ֆրանսիայի ռուսական գործերի հաւատարմատարի հեռագիրն է Սազօնովին, սեպտ. 12-ից, թէ ինքը ռեֆօրմների ծրագիրը յանձնեց Պալէօլօգին (ֆրանսիական արտաքին գործերի մինիստրի օգնականին)։ Վերջինս իր կողմից ծրագիրը շատ նպատակայարմար է գրել և խոստացել է համապատասխան հրահանգ ուղարկել Կ. Պօլսի ֆրանսիական դեսպանին։

(Կը շարունակվի)

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Դրամա

Թիֆլիսի Թատերասէր հասարակութիւնը մի քանի օր առաջ շտապել էր տոմսակ վերցնել ներկայ լինելու մարտի 5-ին Արտիստական Թատրոնում նշանակված «Սաֆօ» կոմէդիայի ներկայացմանը, ուր առաջին անգամը այս սէզօնին հանդէս պիտի գար անցեալ տարվանից հանրածանօթ տաղանդաւոր արտիստուհի Ժիխարևվան։ Վերջինս բեմի վրա երևալուն պէս՝ ծայրից-ծայր լիքը թատրօնը դղրդաց բուռն և երկարատև ծափահարութիւններով։ Գուցէ զարմանալու թւայ ոմանց, որ կոմէդիայի մէջ է հանդէս գալիս Ժիխարևվան, որի ամպլուան գլխաւորաբար ուժեղ դրամատիկական բնոյթ կրող դերեր կատարելու մէջ է կայանում։ Սակայն այդ զարմանքը կը փարատվի, եթէ ասենք, որ «Սաֆօյի» մէջ դրամատիկական պօէզիան աւելի զօրեղ է արտայայտված, քան կատակերգականը, որին պիէսի հեղինակներ Ա. Դօդէն և Ա. Բիլը տուել են համարեա երկրորդական տեղ։

Պիէսի գլխաւոր առանցքը պտտում է երկու անձի՝ Պարիզի կաֆէ-շանտանային նախկին արտիստուհի Ֆաննի Լէգրանի (Սաֆօ մականունով) և ուսանող Ժան Գօսէնի շուրջը։ Ֆաննին (Ժիխարևվա) խելագարի պէս սիրահարված է Ժանի (Պետրիպա) վրա։ Վերջինս նոյնպէս սիրում է Ֆաննիին։ Երկուսը միասին որոշում են ապրել Պարիզի մօտ գտնվող մի գիւղում, ոչ-օրէնական ամուսնութեամբ։ Սակայն երկար չէ տևում այդ կենակցութիւնը։ Ժանը պատահաբար տեղեկանալով Ֆաննիի «անցեալի» և նրա ապօրինի զաւակի գոյութեան մասին, սկսում է խանդոտել, որից և առաջանում են ընդհարումներ և հոգեկան տանջանքներ զոյգերի միջև։ Ժանը բաժանվում է իրան դեռ ևս ջերմ սիրող Ֆաննիից։ Վերջինս ռմբակոծում է նրան տանջվող ու սիրող սրտից բղխած աղերսանք բովանդակող նամակներով։ Ժանը չէ կարդում Ֆաննիի նամակները, թէև սէրը առ Ֆաննին չէ մարած նրա մէջ, և թողնում է նրանց անպատասխան։ Վերջինս այցելում է Ժանին և աղերսում վերադառնալ ու նորից ապրել միասին։ Ժանը մնում է անսասան։ Ֆաննին գլխիկոր վերադառնում է գիւղ, հաւաքում իր ունեցած-չունեցածը՝ գիւղից մեկնելու նպատակով։ Այդ ժամանակ Ժանը գալիս է գիւղ, նորից նետվում Ֆաննիի գիրկը, սակայն ի զուր... Վերջինս, չը նայած շարունակում է բուռն կերպով սիրել Ժանին, որոշած է ունենում խեղդել իր մէջ այդ տանջալից սէրը և ապրել իր միակ զաւակի հետ միասին՝ այն մարդու տանը, որից ունեցել է այդ ապօրինի զաւակը։ Ժանը երբ պառկում է հանգստանալու, Ֆաննին գրում է արտասուախառն մի նամակ, դնում քնած Ժանի վերմակի վրա և հոգեկան լի յուզումներով մեկնում գիւղից։

Ժիխարևվա միանգամայն հմայում էր իր խաղով ներկաներին։ Ճիշդն ասած, տաղանդաւոր արտիստուհին ոչ թէ խաղում, այլ ապրում էր բեմի վրա՝ հանդէս բերելով Ֆաննիի ջերմ սիրոյ ու հոգեկան տրագիզմի ելևէջներն ու վերապրումները։ Հասարակութիւնը վարձատրեց նրան անվերջ ծափահարութիւններով և ծաղկեփնջերի տարափով։

Շնորհալի խաղընկեր հանդիսացաւ և Պետրիպան՝ ծայրայեղ խանդոտ և իր շրջապատի նախապաշարական հնամաշ սովորոյթներին ենթակայող Ժանի դերում։ Ք—ր

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սամարա, 9 փետրվարի

Սալմաստի Մահլամ գիւղից գաղթած բնակիչներից իմ փեսայիս, քոյրերիս և քրոջս որդիների տեղը մինչև օրս անյայտ են ինձ։ Նրանք կոչվում են՝ Յովհ. Քիշմիշօվ, քոյրս՝ Ոսկի, քրոջս որդիքը՝ Վարդան, Քիշմիշ, Խաչատուր և այրի քոյրս՝ Ալմաստը՝ իր աղջիկ Մանուշակի հետ։ Խնդրում եմ ընթերցողներին՝ ով գիտէ վերոյիշեալների տեղը, թող բարի լինի յայտնել ինձ առանց նամակադրոշմի հետևեալ հասցէով՝ Самара, Саркисъ Акоповичъ Кореканцъ.

Նախօրօք յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը։ Սարգիս Կորեկեանց

Խնուշինակ, 12 փետրվարի

Պ. խմբագիր, թոյլ տուէք ձեր թերթի միջոցով մեր շնորհակալութիւնները յայտնելու Բագուի այն մի խումբ նուիրատուներին, որոնք մի օրինակ «Մշակ» են նուիրել գիւղիս եկ.-ծխ. դպրոցին։

Փոխ-նախագահ հոգաբարձութեան՝
Իվան Ղազարեան
Անդամներ՝ Թէօս Այդինեան, Մարգար Հայրապետեան, Իվան Տէր-Գրիգորեան, Խաչատուր Տէր-Գրիգորեան։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր. երեկ.
№ 6	(արագ) »	12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր. երեկ.
	» Ջուլֆա	10 ժ. 23 ր. երեկ.
	» Բորժոմ	3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4	Բաթումից—	5 ժ. 55 ր. երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր. երեկ.
№ 10	Բաթումից—	9 ժ. 51 ր. առաւ.
	Ջուլֆայից —	6 ժ. 53 ր. առաւ.
	Բորժոմից —	7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 Թ.
(Պուշկին., Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—39

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ.Ա.ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմէօնօվսկայա փող., № 18 (Վօրօնցօվի արձանի մօտ)։ Բժշկի բնակարանը Սեմէօնօվսկայա, № 16.
(չ. ու. կ.) 1018. 100—41

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Բ. ԻՇԽԱՆԵԱՆ
„Գերմանիայի եւ Թիւրքիայի տնտեսա-քաղաքական փոխ-յարաբերութիւնը“ (քննական տեսութիւն), երես 64, գինը 25 կոպէկ։
Արդիւնքը յատկացվում է փախստականների օգտին.
Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ», Կենտրոնական և «Գիր» գրախանութներին։ Նոյն տեղը վաճառվում է հեղինակի ռուս. գրքոյկը
„Нѣмецкій профессоръ о германскомъ шовинизмѣ“.
Գինը 15 կոպէկ։
(օ. մ.) 98. 10—8

Центральная музыкальная торговля
НАЗАРЯНЦЪ
Михайловскій просп. 127

1011. (կ.) 50—16

ՀՐԱՒԷՐ

Թեմիս գերապատիւ Սրբազան Առաջնորդի կարգադրութեան համաձայն՝ մարտի 8-ին, կիրակի, ս. պատարագից յետոյ, ժամը 12-ին, նշանակված է Բէթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցում ծխական երկրորդ ժողով։

Օրակարգն է՝

1) Նախկին հաշւետուների զեկուցումը եկեղեցու 1909—1914 թւի մուտք և ելից հաշիւների մասին։
2) Նոյն հաշւետու անդամներից մէկի բողոքը։
3) 1915 թ. եկեղեցու և ուսումնարանի նախահաշւի հաստատումը։
4) Ուսումնարանի տանիքը նորոգելու և այլ խնդիրներ։

Ուստի յիշեալ եկեղեցու ձայնատու ծխականներին խնդրում եմ շնորհ բերել նշանակված ժամին ժողովին մասնակցելու։

Գործակալ Ս. մասի՝
Սարգիս ա.-ք. Շիօյեանց
134. 1—1

Ծախվում են

1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ», նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և րէցէպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրվա ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրվելով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրօնիքական տրիպէրի և բժշկութեան մասին, րէցէպտներով։ Գինը 50 կոպ.։
2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՒՈՆ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ, թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնութ Բազմաթիւ անոյն դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մի օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գին 30 կոպ.։
3) «ԾԻԾԱՂԻ ՏԿԶՈՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անէկդօտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ ակճորի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.

Այս երեք գրքերը միայն պահանջողներին

ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ

երեք հետևեալ գրքերը. 1) «Կնիկարմատի չալվարը» ծիծաղաշարժ վօդևիլ չափահասների համար (գինն 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «Մի նոյն գաղտնիք», պատմուածք հայ-թիւրքական կռիւներից, զինկոնների նկարներով, գինն է 7.։

Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. առաջուց ուղարկել անպայման պէքէվօդով։ (Մարկաներ չ ընել նամ.-կներում, հակառակ դէպքում պատասխանատու չեմ ոչ մի կերպ։ Հասցէ՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаяецу.
(հ.կ.) 327. 100—81

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Յօգուտ «Մշակի» ֆօնդի
հետևեալ գրքերը.

1) «ՄՇԱԿ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ	գ. 1 ր.
2) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ	» — 30
3) ԿԱՅԵՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Ալ. Առաքելեանի	» — 50
4) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յոբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ)	1
5) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I	1

Վերոյիշեալ հրատարակութիւններից մի օրինակ պահանջողները ճանապար ծախս չեն վճարում։ 2. 0—3

Գոյքերը կրակից ապահովող Թիֆլիսի Փոխադար Ընկերութեան Վարչութիւնը

սրանով յայտնում է, որ տարեկան հաշիւը 1914 թ., Ընկերութեան գործերի դրութ մասին, մատեանների և վաւերագրերի հետ միասին, կանոնադր. § 36-ի հիման վրա, ցադրված է Վարչութեան մէջ ի տեսութիւն ապահովագրվողների։
130. 1—1

Թիֆլիսի „ԳԻՐ“ եւ „ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“ գրախանութներ
վաճառվում են նոր լոյս տեսած
1) Ս.ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ IV տպ.
Նոր յաւելուած—«Նայեաց սիրով» և այլն, գինը 20 կոպ.։
2) ՑՈՒՇԱՐՁԱՆ Արմաւրի քառ. երգեցիկ խմբի
Պատմական ակնարկ՝ չերքեզների, կօզակների, չերքեզահայերի և Արմաւրի քառ. խմբի վերաբերեալ, գ. 1
Կազմողի հասցէն՝ ТИФЛИСЪ, Михайл. пр. № 38. Учителю С. Шааняну.
(հ. կ.) 119. 3—3

Գեղարուեստ

Գրական, արուեստագիտական, երաժշտա
կան պատկերազարդ հանդէս
Խմբագրութեամբ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ
Թիֆլիսում

◆ ◆

Լոյս են տեսել I, II, III, IV և V գրքերը։
Խմբագրվում է եւ շուտով տպագրութեան կը յանձնվի VI ԳԻՐՔԸ,
որը պարունակելու է ի միջի այլոց.—Գրական բաժնում՝ Խաչ. Աբովեանի մի ան վէպը և Աւ. Իսահակեանի «Աբու Լալա Մահարին» (ամբողջութեամբ)։ Երաժշտա բաժնում՝ «Հայոց ազգային հիմնը»։ Պատկերների բաժնում՝ «Պատերազմը գեղար տի մէջ» (ռազմական նկարչութեան գլուխ գործոցները)։

Իւրաքանչիւր գիրքն արժէ ճանապարհածախսով 2 ր. 50 կոպ.։ Բացված է բ նորդագրութիւն V և VI գրքերի համար 4 րուբլի։
Մեր նախկին բաժանորդները, որոնք վճարել են 10 րուբլի, ստանալու են և և VI գրքերը, տարաքաղաքացիք աւելացնելով ճանապարհածախսը 1 րուբլի. իսկ բաժանորդները, որոնք կը ցանկանան ձեռք բերել նաև նախորդ [illegible] գրք պէտք է վճարեն միասին 12 րուբլի։
Խմբագրութեան հասցէն՝ Վանքի-Մեծ փողոց, տ. № 4 (ժամը 4—7-ը)։ Օտար դերից դիմել՝ Тифлисъ, редакція «Гехарвестъ», կամ Tiflis, Rédaction «Gegharvest Թիֆլիսում կարելի է բաժանորդագրվել նաև «Գուտտենբերգ» և «Գիր» գրախանութներ
Տպագրվում է Գ. Լևոնեանի «Աշխարհէ աշխարհ» պատկերազարդ աշխատութեան պրակը։ Ա. և Բ. պրակները միասին ճանապարհածախսով 1 րուբլի։ (շ.) 88 5—

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.